

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Սույն օրենքով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական, վերաապահովագրական և ապահովագրական միջնորդային գործունեության կազմակերպման և իրականացման, այդ գործունեության նկատմամբ պետական վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև ապահովագրության հետ կապված այլ հարաբերություններ:»:

2) 2-րդ մասում «Օտարերկրյա Ընկերությունները» և «օտարերկրյա Ընկերության» բառերը փոխարինել համապատասխանաբար «Օտարերկրյա ապահովագրական ընկերությունները» և «օտարերկրյա ապահովագրական ընկերության» բառերով:

3) 4-րդ մասում «Ընկերությունների» բառը փոխարինել «ապահովագրական ընկերությունների (այսուհետ՝ նաև Ընկերություն)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 1-ին կետում «սույն օրենքով սահմանված համապատասխան որակավորում ունեցող» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն համապատասխան պաշտոնի համար մասնագիտական գիտելիքների թեստավորում անցած և թեստավորման արդյունքներով բավարար միավորներ հավաքած լինելը հավաստող վավեր վկայական ունեցող հավուր պատշաճին համապատասխանող» բառերով.

2) 4-րդ կետում «գործունեություն իրականացնելու» բառերը փոխարինել «գործունեության» բառով.

3) 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«8. ապահովագրական գործակալ՝ Կենտրոնական բանկի կողմից «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով որպես ապահովագրական գործակալ գրանցված անձ.»:

4) 11-րդ կետում «սույն օրենքով սահմանված կարգով ապահովագրական» բառերը փոխարինել «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ապահովագրական ընկերության» բառերով.

5) 19-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«19) վերաապահովագրական ընկերություն՝ Ընկերություն, որն ունի միայն վերաապահովագրության դասով (դասերով) ապահովագրական գործունեություն իրականացնելու համար «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիայի ներդիր (ներդիրներ).»:

6) 20-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝
«20. վերաապահովագրող՝ Ընկերություն, որն ունի վերաապահովագրության դասով (դասերով) ապահովագրական գործունեություն իրականացնելու համար «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիայի ներդիր (ներդիրներ)»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 4. «Ապահովագրական», «ապահովագրություն», «ապահովագրական բրոքեր», «ապահովագրական գործակալ» բառերի և դրանց ածանցյալների օգտագործումը

1. Արգելվում է Կենտրոնական բանկի կողմից որպես Ընկերություն կամ ապահովագրական գործակալ կամ Ընկերության կամ ապահովագրական գործակալի մասնաճյուղ (ներկայացուցչություն) չգրանցված և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիա չունեցող և այդպիսի լիցենզիա ունեցող անձի մասնաճյուղ (ներկայացուցչություն) չհանդիսացող անձանց կողմից «ապահովագրական» կամ «ապահովագրություն» բառերի, դրանց հոլովված ձևերի, օտար լեզվով այդ բառերի հայերեն տառադարձությունների, թարգմանությունների կամ դրանց զուգորդությունների օգտագործումն իրենց անվանման մեջ, գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ որևէ կերպ աջակցելը գովազդելուն, եթե դրանց օգտագործման իմաստից չի բխում որ խոսքը չի վերաբերում ապահովագրական կամ ապահովագրական միջնորդային գործունեությանը, և եթե նման օգտագործման իրավունքը չի վերապահվել օրենքով կամ միջազգային պայմանագրով:

2. Արգելվում է ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիա չունեցող և այդպիսի լիցենզիա ունեցող անձի մասնաճյուղ (ներկայացուցչություն) չհանդիսացող կամ Կենտրոնական բանկի կողմից որպես ապահովագրական գործակալ կամ դրա մասնաճյուղ (ներկայացուցչություն) չգրանցված անձանց կողմից համապատասխանաբար «ապահովագրական բրոքեր», «վերաապահովագրական բրոքեր» կամ «ապահովագրական գործակալ» բառակապակցությունների, դրանց հոլովված ձևերի, օտար լեզվով այդ բառերի հայերեն տառադարձությունների, թարգմանությունների կամ դրանց զուգորդությունների օգտագործումն իրենց անվանման մեջ, գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ որևէ կերպ աջակցելը գովազդելուն, եթե դրանց օգտագործման իմաստից չի բխում որ խոսքը չի վերաբերում համապատասխանաբար ապահովագրական բրոքերային կամ ապահովագրական գործակալի գործունեությանը, և եթե նման օգտագործման իրավունքը չի վերապահվել օրենքով կամ միջազգային պայմանագրով:

3. Որպես Ընկերություն գրանցված անձանց անվանումը պետք է պարունակի «ապահովագրություն», «ապահովագրական», «վերաապահովագրություն» կամ «վերաապահովագրական» բառերը:

4. Ընկերությունը, ապահովագրական բրոքերը և ապահովագրական գործակալն իրավունք չունեն իրենց ֆիրմային անվանման մեջ ապակողմնորոշող այնպիսի բառեր օգտագործելու, որոնք կարող են տեղիք տալ թյուր ենթադրության՝ տվյալ ապահովագրական բրոքերային կազմակերպության ֆինանսական վիճակի, իրավական կարգավիճակի կամ մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

5. Ապահովագրական գործունեությունը կարող է գովազդվել միայն Ընկերության գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից կամ նրա պատվերով: Վերաապահովագրական գործունեությունը կարող է գովազդվել միայն այն Ընկերության կողմից կամ նրա պատվերով, որն ունի վերաապահովագրության դասով (դասերով) ապահովագրական գործունեություն իրականացնելու համար «Ֆինանսական

կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիայի ներդիր:

6. Ապահովագրական բրոքերային գործունեությունը կարող է գովազդվել միայն ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից կամ նրա պատվերով:

7. Ապահովագրական գործակալի գործունեությունը կարող է գովազդվել միայն Կենտրոնական բանկի կողմից որպես ապահովագրական գործակալ գրանցված անձի կողմից կամ նրա պատվերով:»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «սույն օրենքով սահմանված կարգով» բառերը:

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ընկերություններին վերաբերող կամ նրանց համար սույն օրենքով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավական նորմերը տարածվում են նաև օտարերկրյա Ընկերությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի, վերաապահովագրական ընկերությունների ու ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձանց վրա, բացառությամբ սույն օրենքի 22-րդ գլխի դրույթների և այն դեպքերի, երբ այլ բան է սահմանված սույն օրենքով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, կամ իրավական նորմի էությունից ակնհայտորեն բխում է, որ խոսքը չի կարող վերաբերել օտարերկրյա Ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղին, վերաապահովագրական ընկերությանը կամ ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձին:»:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 9. Նշանակալից մասնակցությունը

1. Սույն օրենքի և ապահովագրական գործունեությունը կարգավորող այլ օրենքների իմաստով՝

1) նշանակալից մասնակցությունը կարող է լինել ուղղակի և անուղղակի.

2) ուղղակի նշանակալից մասնակցություն է համարվում իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում այնպիսի մասնակցությունը, որի դեպքում մասնակիցն ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կամ բաժնեմասերի կամ փայերի (այսուհետ՝ բաժնետոմս) 10 և ավելի տոկոսը.

3) անուղղակի նշանակալից մասնակցություն է համարվում՝

ա. տվյալ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50 և ավելի տոկոսին տիրապետելը, կամ

բ. տվյալ իրավաբանական անձի կամ տվյալ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումների կայացման (կիրառման) վրա էապես ազդելու կամ գործունեության ուղղությունները կանխորոշելու՝ Կենտրոնական բանկի հիմնավոր

կարծիքով հաստատված հնարավորությունը՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

Հոդված 8. Օրենքի 13-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 13. Փոխկապակցված անձինք

1. Սույն օրենքի և ապահովագրական գործունեությունը կարգավորող այլ օրենքների իմաստով՝

1) իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. նրանցից մեկը մյուսի կանոնադրական կապիտալում ունի ուղղակի կամ անուղղակի նշանակալից մասնակցություն.

բ. նրանցից մեկի կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձը կամ նրա ընտանիքի անդամը ուղղակի կամ անուղղակի նշանակալից մասնակցություն ունի մյուսի կանոնադրական կապիտալում.

գ. նրանցից մեկի ղեկավարների ընդհանուր թվի մեկ երրորդը կամ ավելին հանդիսանում են մյուսի ղեկավարներ.

2) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են կամ վարում են համատեղ տնտեսություն կամ պայմանագրի հիման վրա իրականացնում են համատեղ ձեռնարկատիրական գործունեություն կամ այդպիսիք են ճանաչվել Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերի առկայության դեպքում.

3) ֆիզիկական անձը և իրավաբանական անձը համարվում են փոխկապակցված, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է իրավաբանական անձի ղեկավար կամ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ունի ուղղակի կամ անուղղակի նշանակալից մասնակցություն.

4) միևնույն ընտանիքի անդամ են համարվում ծնողները, ամուսինը, երեխաները.

5) իրավաբանական անձի, բացառությամբ՝ բանկի, վարկային կազմակերպության, ներդրումային ընկերության, ներդրումային ֆոնդի կառավարչի, ապահովագրական ընկերության, արժեթղթերի կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, վճարահաշվարկային կազմակերպության, ղեկավարներ են համարվում իրավաբանական անձի միանձնյա գործադիր մարմինը և կոլեգիալ գործադիր մարմնի անդամները, խորհրդի անդամները, ինչպես նաև գլխավոր հաշվապահը:»:

Հոդված 9. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասում «և ապահովագրական ընկերությունների» բառերը փոխարինել «, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների» բառերով:

Հոդված 11. Օրենքի 4-րդ գլուխն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Օրենքի 21-րդ հոդվածում՝

1. 2-րդ և 3-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել:

2. 4-րդ մասում «իննսունօրյա ժամկետում» բառերը հանել, իսկ «սահմանված կարգով» բառերից հետո լրացնել «և ժամկետներում» բառերով:

Հոդված 13. Օրենքի 22-րդ և 23-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 14. Օրենքի 27-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Ընկերությունը խորհրդի անդամի հետ կնքում է աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիր, որում պարտադիր նշվում է խորհրդի անդամի պաշտոնավարման ժամկետը:»:

Հոդված 15. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 13-րդ կետը «իրականացման» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հաշվետվությունների քննարկման» բառերով:

2) 4-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ
«Սույն մասով նախատեսված հաշվետվությունները Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով ներկայացվում են Կենտրոնական բանկ:»:

Հոդված 16. Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը «աշխատակիցներ» բառից հետո լրացնել՝ «, ինչպես նաև Ընկերության խորհրդի եզրակացությամբ՝ ոլորտի և (կամ) հանրությունում հեղինակություն վայելող մասնագետներ» բառերով:

Հոդված 16. Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 6-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«6) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել օրենքով սահմանված այլ հիմքեր:»:

Հոդված 17. Օրենքի 33-րդ հոդվածում՝

1) 12-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12. Գործադիր տնօրենի (տնօրինության) իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Ընկերության կառավարման այլ մարմիններին, ներքին աուդիտին, գլխավոր հաշվապահին, պատասխանատու ակտուարին:

Սույն մասի առաջին պարբերությունում չնշված անձանց գործադիր տնօրենի լիազորությունները կարող են փոխանցվել միայն Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետով, և միայն եթե այդ անձը «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ համապատասխան պաշտոնի համար անցել է մասնագիտական գիտելիքների թեստավորում, ունի այդ թեստավորման արդյունքներով բավարար միավորներ հավաքած լինելը հավաստող վավեր վկայական և տվյալ պաշտոնի համար համարվում է հավուր պատշաճին համապատասխանող:

2) 13-րդ մասը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«5) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել օրենքով սահմանված այլ հիմքեր:»:

Հոդված 18. Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասում «համապատասխանում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով Ընկերությունների գլխավոր հաշվապահների համար սահմանված մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշներին» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ համապատասխան պաշտոնի համար անցել է մասնագիտական գիտելիքների թեստավորում, ունի այդ թեստավորման արդյունքներով բավարար միավորներ հավաքած լինելը հավաստող վավեր վկայական և համարվում է տվյալ պաշտոնի համար հավուր պատշաճին համապատասխանող անձ» բառերով:

Հողված 19. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ նախադասությունը «ներքին աուդիտի» բառերից հետո լրացնել «ղեկավար կամ» բառերով.

2) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Ներքին աուդիտի ղեկավարի հաշվետվությունը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) ստուգման նպատակը,

2) դիտարկման նկարագրությունը,

3) դիտարկման արդյունքում բացահայտված խախտումներն ու թերությունները,

4) բացահայտված խախտումների և թերությունների վերացման վերաբերյալ առաջարկված միջոցառումները,

5) բացահայտված խախտումների և թերությունների վերացման մասին ներքին աուդիտի եզրակացությունը,

6) ստուգման ոլորտի կամ օբյեկտների վերաբերյալ ներքին աուդիտի ընդհանուր եզրակացությունը:

Ներքին աուդիտի ղեկավարի հաշվետվությանը կարող են կցվել ստուգվող ստորաբաժանումների կարծիքները և դիտողությունները:

Ներքին աուդիտն առնվազն կիսամյակային կտրվածքով իրականացնում է նախկինում բացահայտված խախտումների և թերությունների վերացման կատարողականի գնահատում և այն ներկայացնում Ընկերության խորհրդին և գործադիր տնօրենին (տնօրինությանը):»:

3) 9-րդ մասը «Կենտրոնական բանկին» բառերից հետո լրացնել «դրանց բացահայտման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հողված 20. Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասը «ներկայացնել» բառից հետո լրացնել «իր գործունեության և դրա արդյունքների վերաբերյալ» բառերով:

Հողված 22. Օրենքի 3-րդ բաժնի վերնագրից հանել «ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ» բառերը:

Հողված 23. Օրենքի 38-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հողված 38. Ընկերության լիցենզավորումը

1. Ընկերությունների լիցենզավորման կարգը և պայմանները սահմանվում են բացառապես «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Այլ օրենքներով լիցենզավորման վերաբերյալ այլ դրույթներ սահմանված լինելու դեպքում Ընկերությունների համար գործում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:»:

Հողված 24. Օրենքի 39-45-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հողված 25. Օրենքի 8-10-րդ գլուխներն ուժը կորցրած ճանաչել:

Հողված 26. Օրենքի 54-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ կետը «անձ» բառից հետո լրացնել «կամ կոնտրագենտի համար աուդիտի իրականացման պարտադիր պահանջի բացակայության հետևանքով կոնտրագենտը չունի աուդիտորական եզրակացություն» բառերով.

2) 4-րդ մասը «գործառույթների պատվիրակումը» բառերից հետո լրացնել «եթե սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաթղթերում և (կամ) տեղեկություններում հայտնաբերվել են էական անճշտություններ, թերություն և (կամ)» բառերով:

Հոդված 27. Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասում «տեսակի, դասի կամ ենթադասի ապահովագրություն իրականացնելու լիցենզիա» բառերը փոխարինել «դասով (դասերով) ապահովագրություն իրականացնելու իրավունքը հավաստող լիցենզիայի ներդիր (ներդիրներ)» բառերով:»:

Հոդված 28. Օրենքի 69-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը «հետևյալ տեխնիկական պահուստները» բառերից հետո լրացնել «, եթե այլ բան սահմանված չէ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով» բառերով:

2) 5-րդ մասում «տեսակի, դասի կամ ենթադասի ապահովագրություն իրականացնելու լիցենզիա» բառերը փոխարինել «դասով (դասերով) ապահովագրություն իրականացնելու իրավունքը հավաստող լիցենզիայի ներդիր (ներդիրներ)» բառերով, իսկ «օրենքով» բառից հետո լրացնել «կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով» բառերով:

Հոդված 29. Օրենքի 75-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 75. Վերաապահովագրման պարտականությունը

1. Ընկերությունը պարտավոր է վերաապահովագրել իր կողմից ստանձնվող յուրաքանչյուր ռիսկի այն չափը, որը կգերազանցի տվյալ դասի և (կամ) ենթադասի համար առավելագույն ծածկույթի աղյուսակով սահմանված չափը:

2. Առավելագույն ծածկույթի աղյուսակով Ընկերությունը սահմանում է ապահովագրության յուրաքանչյուր դասի և (կամ) ենթադասի մասով Ընկերության կողմից ստանձնվող ապահովագրական ռիսկերում սեփական մասնակցության առավելագույն չափը:

3. Կենտրոնական բանկը կարող է սահմանել պահանջներ ապահովագրության առանձին դասերով և (կամ) ենթադասերով Ընկերության կողմից ստանձնվող ապահովագրական ռիսկերում սեփական մասնակցության առավելագույն չափի հաշվարկի, դրա սկզբունքների և մեթոդների նկատմամբ:»:

Հոդված 30. Օրենքի 76-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. 1-ին կետը «դասի» բառից հետո լրացնել «և (կամ) ենթադասի» բառերով.

բ. 1-ին կետում «չափը» բառը փոխարինել «չափի հաշվարկը» բառերով.

գ. 3-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.

2) 2-րդ մասում՝

ա. 2-րդ և 3-րդ կետերից «տեսակների» բառը հանել, իսկ «ու» բառը փոխարինել «և (կամ)» բառերով.

բ. 4-րդ կետում «և» բառը փոխարինել «և (կամ)» բառերով:

Հոդված 31. Օրենքի 78-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 78. Համատեղ ապահովագրության սահմանափակումները

1. Ընկերություններին արգելվում է համատեղ ապահովագրության պայմանագրով ապահովագրել ստանձնվող ապահովագրական ռիսկի այն մասը, որը գերազանցում է առավելագույն ծածկույթի աղյուսակով սահմանված չափը:»:

Հոդված 32. Օրենքի 80-րդ հոդվածի 4-րդ մասում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին»» բառերով:

Հոդված 33. Օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը «լիցենզիայի» բառից հետո լրացնել «(լիցենզիայի ներդիրի)» բառերով:

Հոդված 34. Օրենքի 82-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«1. Ընկերության և նրա հետ կապված անձանց, բացառությամբ՝ մասնակիցների և խորհրդի անդամների, միջև կնքվող գործարքները կարող են այդ անձանց համար սահմանել ավելի բարենպաստ պայմաններ (այդ թվում՝ գործարք կնքելու հնարավորություն, սակագին, ապահովագրական գումար և այլն), քան Ընկերության աշխատակից չհանդիսացող այլ անձանց հետ կնքվող նույնանման գործարքները, եթե.

1) բարենպաստ պայմաններով գործարքի կնքումը Ընկերության ներքին իրավական ակտերի համաձայն գնահատված ցածր ռիսկայնության հետևանք է, և (կամ)

2) բարենպաստ պայմանները սահմանված են Ընկերության ներքին իրավական ակտերով:»:

2) հոդվածը լրացնել 1.1-րդ և 1.2-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«1.1. Ընկերության և նրա մասնակիցների կամ նրա խորհրդի անդամների միջև չեն կարող կնքվել գործարքներ, որոնք մասնակիցների կամ նրա խորհրդի անդամների համար սահմանում են ավելի բարենպաստ պայմաններ (այդ թվում՝ գործարք կնքելու հնարավորություն, սակագին, ապահովագրական գումար և այլն), քան Ընկերության աշխատակից չհանդիսացող այլ անձանց հետ կնքվող նույնանման գործարքները:

1.2. Ընկերության և նրա ղեկավարների միջև չեն կարող կնքվել գործարքներ, որոնք ղեկավարների համար սահմանում են ավելի բարենպաստ պայմաններ (այդ թվում՝ գործարք կնքելու հնարավորություն, սակագին, ապահովագրական գումար և այլն), քան Ընկերության աշխատակից հանդիսացող այլ անձանց հետ կնքվող նույնանման գործարքները:»:

Հոդված 35. Օրենքի 84-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «դրանց մասնաճյուղերը» բառերը փոխարինել «օտարերկրյա Ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերը» բառերով.

2) 3-րդ մասում «15» թիվը փոխարինել «30» թվով, իսկ «Ֆինանսական հաշվետվությունները» բառերից հետո լրացնել «և հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը» բառերով.

3) 4-րդ մասի 4-րդ կետում «1-ին» բառը փոխարինել «2-րդ» բառով:

Հոդված 36. Օրենքի 87-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «սույն օրենքով» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով, իսկ «բրոքերի» բառից հետո լրացնել «գործունեության» բառով.

2) 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3. Ապահովագրական գործակալի գործունեություն կարող են իրականացնել միայն «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով որպես ապահովագրական գործակալ գրանցված իրավաբանական անձը, ինչպես նաև Ընկերության հետ աշխատանքային պայմանագիր կնքած և «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ապահովագրական գործակալի համար մասնագիտական գիտելիքների թեստավորում անցած և այդ թեստավորման արդյունքներով բավարար միավորներ հավաքած լինելը հավաստող վավեր վկայական ունեցող ապահովագրական գործակալի պաշտոնում հավուր պատշաճին համապատասխանող ֆիզիկական անձը:

4. Ապահովագրական բրոքերի գործառնություններ կարող են իրականացնել միայն ապահովագրական բրոքերի գործադիր տնօրենը կամ վարչության նախագահը, վարչության անդամները, գլխավոր հաշվապահը, գործադիր տնօրենի տեղակալը, ինչպես նաև ապահովագրական բրոքերի հետ աշխատանքային կամ այլ քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ գտնվող բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձը (ապահովագրական բրոքերի պատասխանատու անձինք):

5. Ապահովագրական գործակալի գործառնություններ կարող են իրականացնել միայն ապահովագրական գործակալի խորհրդի այն անդամը (անդամները) կամ գործադիր մարմնի կամ դրան համարժեք այլ մարմնի անդամը, որոնք պատասխանատու են ապահովագրական գործակալի գործառնությունների համար, ինչպես նաև ապահովագրական գործակալի հետ աշխատանքային կամ այլ քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ գտնվող ապահովագրական գործակալի գործառնություններն իրականացնող ֆիզիկական անձը (ապահովագրական գործակալի պատասխանատու անձինք):»:

Հոդված 37. Օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3) մեկ ապահովագրության պայմանագրով և/կամ բոլոր ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրավճարների տարեկան գումարները չեն գերազանցում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափը, ինչպես նաև մեկ պայմանագրի գործողության ժամկետը (ներառյալ՝ պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման ժամկետը) չի գերազանցում 5 տարին.»:

Հոդված 38. Օրենքի 89-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 89. Ապահովագրական միջնորդների գրանցումը

1. Ընկերությունը կամ վերաապահովագրական ընկերությունը կարող է օգտվել միայն սույն օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասում նախատեսված անձանց կամ սույն օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասում նշված գործունեություն իրականացնող անձանց ապահովագրական միջնորդական ծառայությունից:

2. Ապահովագրական բրոքերների լիցենզավորման, ինչպես նաև իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ապահովագրական գործակալների գրանցման և գրանցումն ուժը կորցրած ճանաչելու կարգը և պայմանները սահմանվում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

3. Գրանցված ապահովագրական միջնորդների ցանկը, նրանց վերաբերյալ տվյալները պետք է հրապարակվեն Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում:»:

Հոդված 39. Օրենքի 90-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 40. Օրենքի 92-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հաշվարկային» բառը փոխարինել «բանկային» բառով:

2) 2-րդ մասում «, բացառությամբ» բառը փոխարինել «բացառապես» բառով:

Հոդված 41. Օրենքի 94-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 42. Օրենքի 96-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«2. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել ապահովագրական բրոքերային կազմակերպությունների կողմից իրենց ինտերնետային կայքում, մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներում հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը, հրապարակման պարբերականությունը:»:

Հոդված 43. Օրենքի 97-101-րդ և 103-107-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 44. Օրենքի 108-րդ հոդվածի 2-րդ մասում «հրապարակումն» բառը փոխարինել «հրապարակումը, ինչպես նաև սույն օրենքի 84-րդ կամ 96-րդ հոդվածով սահմանված տեղեկատվության հրապարակումն» բառերով:

Հոդված 45. Օրենքի 113-րդ հոդվածի 2-րդ մասում «բանկի» բառը փոխարինել «ապահովագրողի, վերաապահովագրողի, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձի» բառերով:

Հոդված 46. Օրենքի 116-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 47. Օրենքի 129-րդ հոդվածի 2-րդ մասում «լիցենզիա ստացած» բառերը փոխարինել «իրավունք հավաստող լիցենզիայի ներդիր (ներդիրներ) ունեցող» բառերով:

Հոդված 48. Օրենքի 131-րդ հոդվածի 3-րդ մասում «որոնցով միացած Ընկերությունը կամ Ընկերություններն ունենին թույլտվություն կնքելու ապահովագրության պայմանագրեր» բառերը փոխարինել «որոնց համար միացած Ընկերությունը (Ընկերությունները) ունենին լիցենզիայի ներդիր (ներդիրներ)» բառերով:

Հոդված 49. Օրենքի 135-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 135. Ընկերության լուծարումը

1. Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ և լիցենզիան ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչելու հիմքերով Ընկերության լուծարման կարգը և պայմանները սահմանվում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

2. Ընկերության սնանկության հիմքով նրա լուծարման կարգը և Ընկերության անվճարունակության և սնանկության հետ կապված այլ հարաբերությունները

կարգավորվում են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 50. Օրենքի 136-141-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 51. Օրենքի 142-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին»» բառերով.

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 52. Օրենքի 143-րդ հոդվածում՝

1) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2) խախտվել են տնտեսական նորմատիվների կամ տեխնիկական պահուստների՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված հաշվարկման կարգը կամ դրանց համար սահմանված սահմանաչափերը.»:

2) 7-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 53. Օրենքի 145-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ կետում և 3-րդ մասում «անձին որակավորման վկայականից զրկում» բառերը փոխարինել «անձին տրված չառարկելու մասին նամակի հետ կանչում» բառերով.

2) 1-ին մասի 4-րդ կետում «լիցենզիայի» բառից հետո լրացնել «(գրանցման)» բառով:

Հոդված 54. Օրենքի 148-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 148. Վերահսկվող անձի ղեկավարներին կամ պատասխանատու անձանց տրված չառարկելու մասին նամակի հետ կանչումը

1. Վերահսկվող անձի ղեկավարին կամ պատասխանատու աշխատակցին տրված չառարկելու մասին նամակը, որպես պատասխանատվության միջոց, կարող է հետ կանչվել Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե նա՝

1) դիտավորությամբ խախտել է օրենքը կամ այլ իրավական ակտը.

2) կատարել է այնպիսի գործողություններ կամ ցուցաբերել է այնպիսի անգործություն, որի հետևանքով վերահսկվողը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնասներ.

3) պաշտոնավարման ընթացքում վարել է անհիմն և ապահովադիրների, ապահովագրված անձանց կամ շահառուների օրինական շահերը վտանգող գործունեություն կամ դրսևորել է անազնիվ կամ անբարեխիղճ վերաբերմունք իր ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ վերահսկվողի, ապահովադիրների, ապահովագրված անձանց կամ շահառուների հանդեպ ստանձնած պարտականությունների նկատմամբ.

4) խոչընդոտել է վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին կամ չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել Կենտրոնական բանկի՝ օրենքի հիման վրա տրված հանձնարարականները.

5) գործունեության ընթացքում կատարել է անձնական շահերից բխող այնպիսի գործողություն կամ թույլ է տվել այնպիսի անգործունեություն, որը հակասում է վերահսկվողի, ապահովադիրների, ապահովագրված անձանց կամ շահառուների օրինական շահերին:»:

Հոդված 55. Օրենքի 149-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 149. Լիցենզիան (գրանցումը) ուժը կորցրած ճանաչելը

1. Վերահսկվողի լիցենզիան ամբողջությամբ կամ առանձին ապահովագրության դասի (դասերի) մասով (ապահովագրական գործակալի գրանցումը) կարող է, որպես պատասխանատվության միջոց, ուժը կորցրած ճանաչվել Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, եթե՝

1) վերահսկվողը լիցենզիա (լրացուցիչ թույլտվություն) ստանալուց հետո 12 ամիս անընդմեջ ապահովագրական կամ ապահովագրական միջնորդային գործունեություն (համապատասխան ապահովագրության դասով ապահովագրական գործունեություն) չի իրականացրել.

2) վերահսկվողը հրապարակել կամ Կենտրոնական բանկ է ներկայացրել (այդ թվում՝ լիցենզավորման գործընթացում) ապակողմնորոշիչ, ոչ արժանահավատ տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

3) վերահսկվողը կամ նրա ղեկավարները թույլ են տվել սույն օրենքի, վերահսկվողի գործունեությունը կարգավորող այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի կամ իր ներքին իրավական ակտերի պահանջների պարբերական (երկու և ավելի) խախտումներ.

4) վերահսկվողն իրականացրել է օրենքով չնախատեսված և Կենտրոնական բանկի կողմից սույն օրենքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն չթույլատրված գործունեություն կամ գործառնություններ.

5) վերահսկվողը թույլ է տվել այնպիսի արարք (գործողություն կամ անգործություն), որը Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով վտանգել է ապահովադիրների, ապահովագրված անձանց կամ շահառուների շահերը կամ հանգեցրել է հրապարակման կամ տրամադրման ոչ ենթակա տեղեկատվության արտահոսքի.

6) վերահսկվողը չի իրականացրել կամ ոչ պատշաճ է իրականացրել Կենտրոնական բանկի կողմից օրենքի համաձայն տրված հանձնարարականները.

7) խախտվել են սույն օրենքով և դրա հիման վրա Կենտրոնական բանկի ընդունած նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվները կամ տեխնիկական պահուստները՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափով.

8) խախտվել են հաշվապահական հաշվառում վարելու կանոնները կամ ֆինանսական կամ այլ հաշվետվությունների ներկայացման կամ հրապարակման կարգը կամ պայմանները

9) ապահովագրական գործակալն իրականացրել է ապահովագրական բրոքերի գործունեություն.

10) ապահովագրական գործակալը կամ ապահովագրական գործակալի ղեկավարը խախտել է սույն օրենքի 102-րդ հոդվածով նախատեսված ապահովագրության պայմանագրի միջնորդության իրականացման նկատմամբ ներկայացվող պահանջները:»:

Հոդված 56. Օրենքի 150-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 57. Օրենքի 157-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 157. Օրենքով սահմանված ժամկետների կասեցումը

1. Սույն օրենքով սահմանված նախնական համաձայնություն տալու, համաձայնություն տալու կամ սույն օրենքի հիման վրա ցանկացած այլ իրավական ակտ

ընդունելու համար սահմանված ժամկետները Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով կարող են Կենտրոնական բանկի կողմից կասեցվել, բայց ոչ ավելի, քան 6 ամիս ժամկետով:

2. Նախնական համաձայնություն տալու, համաձայնություն տալու կամ սույն օրենքի հիման վրա ցանկացած այլ իրավական ակտ ընդունելու համար սահմանված ժամկետներում Կենտրոնական բանկի կողմից անձի դիմումը, միջնորդագիրը, հայտը կամ ցանկացած այլ միջնորդությունը չմերժելու կամ սահմանված ժամկետը կասեցնելու մասին անձին չտեղեկացնելու դեպքում օրենքով սահմանված իրավական ակտերը համարվում են Կենտրոնական բանկի կողմից ընդունված:»:

Հոդված 58. Օրենքի 159-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 59. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: